

## Ուկրաինացիները Հայաստանում

**Ուկրաինացիները Հայաստանում** հաստատվել են 19-րդ դարի կեսերին, երբ «Փոքր Ռուսիայից» Անդրկովկաս են փոխադրվել «կոզակներ»՝ **Ռուսական**

**կայսրության** հարավային սահմանները ամրապնդելու

համար: **Ուկրաինացիների** մեծ մասը զբաղվում էր գյուղատնտեսությամբ:

1989 թ. տվյալներով ՀԽՍՀ-ում բնակվում էր 8,3 հզ ուկրաինացի, սակայն անկախությանը հաջորդող և տնտեսական ճգնաժամի տարիներին նրանց մեծ մասը հեռացել են: 2001 թվականին Հայաստանում բնակվում էր 1,6 հզ ուկրաինացի: 2012 թ. պայմաններով Հայաստանում բնակվում է 2.000 ուկրաինացի: